ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՔԱՐԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

REPUBLIC OF ARMENIA
ARMAVIR MARZ
KARAKERT MUNICIPALITY

Արմավիրի մարզ գ. Քարակերտ
Բարեկամության 2
հեռ. 0233 6-25-65

Armavir Marz Karakert village
Barekamutyun 2
Tel. 233 6-25-65
Email: Karakert97@mail.ru

N 118

07.12.2015թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Ղահրամանյան.

Ձեզ է ներկայացվում ՀՀ Արմավիրի մարզի Քարակերտի գյուղական համայնքի ավագանու 2015թվականի նոյեմբերի 30-ի նիստի թիվ 6 որոշումները:

Առդիր՝ 12 թերթ:

Քարակերտ համայնքի ղեկավար՝ Մ. Հարոենյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 112.97/13254-15
«11» 12 2015 թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ
Քարակերտ համայնք, Բարեկամության 2
Հեռախոս (023)36-25-65, Էլ. Փոստ` qarakert armavirkenta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«30» նոյեմբեր -ի 2015 թվականի N 38

### ԱՎԱԳԱՆՈՒ 2015ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-ի ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասով համայնքի ավագանին որոշում է.

1,Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Քարակերտ գյուղական համայնքի ավագանու 2015թվականի նոյեմբերի 30-ի ավագանու նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ (5) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ՀԱԿՈԲՅԱՆ ՄԻՀՐԱՆ
ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԼԱՅԵՐԹ
ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐՍԵՆ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՄՈՒՇԵՂ
ՄԱՆՈՒԿՅԱՆ ՄԱՐՈՒԹ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ՀԱՐԹԵՆՅԱՆ

ՔԱՐԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ
04600

ՀԱՎԱՆՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱԿԵՐՏԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2015ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ 3 ՈՐՈՇՄԱՆ

# ՕՐԱԿԱՐԳ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

1. ԱՎԱԳԱՆՈՒ 2015ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-ի ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ:

/զեկ. Մ. ՀԱՐԹԵՆՅԱՆ/

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱԿԵՐՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2015ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Մ. ՀԱՐԹԵՆՅԱՆ/

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱԿԵՐՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2015ԹՎԱԿԱՆԻ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Մ. ՀԱՐԹԵՆՅԱՆ/

4. 2014ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 08-Ի ՀԱՍՏԱՏՎԱԾ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Մ. ՀԱՐԹԵՆՅԱՆ/

5. ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/զեկ. Մ. ՀԱՐԹԵՆՅԱՆ/

6. ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ ԱՌԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՍԻՆ:

/զեկ. Մ. ՀԱՐԹԵՆՅԱՆ/

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ
Քարակերտ համայնք, Բաղեկամուրյան 2
Հեռախոս (0233)6-25-65, էլ. Փոստ` qarakert.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» նոյեմբեր-ի 2015 թվականի N 39-Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱԿԵՐՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2016ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 18-րդ կետով և <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ, 10-րդ, 11-րդ հոդվածներով

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Քարակերտ գյուղական համայնքում 2016թվականի ընթացքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը` համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո ուժը կորցրած ճանաչել ավագանու 2014 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 43-Ն որոշումը:

Կողմ (5) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ՀԱԿՈԲՅԱՆ ՄԻՀՐԱՆ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԼԱՅԵՐՏ

ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՄՈՒՇԵՂ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՄԱՐՈՒԹ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ՀԱՐԹԵՆՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱԿԵՐՏԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2015ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ 39 - Ն ՈՐՈՇՄԱՆ

04600502

# ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2016ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան` նոր շենքերի, շինությունների (ներառյալ` ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է`

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում` այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար` 1500 դրամ,

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար`

բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար` 30000 դրամ,

բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար` 50000 դրամ,

բգ) 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար` 50 000 դրամ,

բդ) 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար` 100 000 դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար`

գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար` 3000 դրամ,

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար` 5000 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված` շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով`

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում` ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն` մինչև 3000 դրամ.

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում` ստորգետնյա) հետևանքով

օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի զարաբիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է մինչև 5000 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 1500 դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 1500դրամ:

5. Համայնքի տարածքում՝

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150 000 դրամ.

գ) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 30 000դրամ.

գա) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 5000 դրամ,

ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 1000 դրամ.

գբ) համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար. տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար 50.000 դրամ:

6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա) առևտրի օբյեկտների համար՝ 25 000 դրամ.

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000 դրամ.

գ) բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000 դրամ.
դ) խաղատների կազմակերպման համար՝ 500 000դրամ.
ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000դրամ.
զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000դրամ:

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.
բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500դրամ.
գ) այլ արտաքին գովազդի համար՝ 500-1500 դրամ.
դ) մինչև 2006 թվականի հոկտեմբերի 1-ը՝ ծխախոտի արտաքին գովազդի համար՝ 3000-5000 դրամ.
ե) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 0 դրամ:

Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50 000դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 1000դրամ:

11. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. սահմանվում է 1000դրամ:

12. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. սահմանվում է 1000դրամ:

13. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար. սահմանվում է 5000դրամ:

14. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ աղբահանության վճար. սահմանվում է մեկ բնակելի տան հաշվով ամսեկան 300դրամ:

15. Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրվող թույլտվության վճար սահմանվում է 1 խ/մ 1000դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ
Քարակերտ համայնք, Բարեկամության 2
Հեռախոս (0233)6-25-65, էլ. Փոստ՝ qarakertarmavir@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

«30» նոյեմբերի 2015 թվականի N 40-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱԿԵՐՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2016ԹՎԱԿԱՆԻ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 19-րդ կետով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Քարակերտ գյուղական համայնքի կողմից 2016թվականին մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո ուժը կորցրած ճանաչել ավագանու 2014 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 44-Ն որոշումը:

Կողմ (5) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ՀԱԿՈԲՅԱՆ ՄԻՀՐԱՆ
ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԼԱՅԵՐԹ
ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐՄԵՆ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՄՈՒՇԵՂ
ՄԱՆՈՒԿՅԱՆ ՄԱՐՈՒԹ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ՀԱՐԹԵՆՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱԿԵՐՏԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ 40-Ն ՈՐՈՇՄԱՆ

# ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱԿԵՐՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ

1. Մանկապարտեզի վճար
   Մեկ երեխայի համար 3000 ՀՀ դրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ
Քարակերտ համայնք, Բարեկամության 2
Հեռախոս (0233)6-25-65, Էլ. Փոստ՝ qarakert.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» նոյեմբեր-ի 2015 թվականի N 41-Ն

## 2014ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 08-Ի ԱՎԱԳԱՆՈՒ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70 րդ հոդվածի 2-րդ կետով՝ *համայնքի ավագանին որոշում է.*

1.Քարակերտ համայնքի ավագանու 2013թվականի դեկտեմբերի 18-ի <<ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 53-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

Կողմ (5) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ՀԱԿՈԲՅԱՆ ՄԻՀՐԱՆ
ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԼԱՅԵՐԹ
ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐՍԵՆ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՄՈՒՇԵՂ
ՄԱՆՈՒԿՅԱՆ ՄԱՐՈՒԹ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ՀԱՐԹԵՆՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱԿԵՐՏԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ 41 ՈՐՈՇՄԱՆ

Վարչական բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Հողի հարկը կրճատել 997.4 հազ. դրամ:
2. Գույքահարկն ավելացնել 997.4հազ. դրամ:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ
Քարակերտ համայնք, Բարեկամության 2
Հեռախոս (0233)6-25-65, Էլ. Փոստ qarakert.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«30» նոյեմբերի 2015 թվականի N 42

## ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկը՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրել դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ (5) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ՀԱԿՈԲՅԱՆ ՄԻՀՐԱՆ
ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԼԱՅԵՐԹ
ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐՍԵՆ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՄՈՒՇԵՂ
ՄԱՆՈՒԿՅԱՆ ՄԱՐՈՒԹ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ՀԱՐԹԵՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ
Քարակերտ համայնք, Բարեկամության 2
Հեռախոս (0233)6-25-65, էլ. Փոստ՝ qarakert.armavirmta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» նոյեմբեր -ի 2015 թվականի N 43

## ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ ԱՌԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 17-20-րդ հոդվածներով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետությանօրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկը, *համայնքի ավագանին որոշում է.*

1.Թույլ տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Քարակերտ համայնքի ղեկավարին գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով ու ժամկետներում իրականացնել գնումներ:

2.Գնումները կատարել բանակցային ընթացակարգով առանց հայտարարության՝ համաձայն հավելվածի:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ (5) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ՀԱԿՈԲՅԱՆ ՄԻՀՐԱՆ
ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԼԱՅԵՐՏ
ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐՄԵՆ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՄՈՒՇԵՂ
ՄԱՆՈՒԿՅԱՆ ՄԱՐՈՒԹ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ՀԱՐԹԵՆՅԱՆ